

Համույթում ընդգրկված են 13-16 տարեկան, մայրաքաղաքի տարբեր դպրոցների աշակերտներ: Ուրախալի է, որ ամեն նվագարանի վրա նվագել սովորելու է երկուական տղա, այդպիսով պատրաստվելու են ռեգերային կադրեր: Հարվածային գործիքների վրա ուսանելու են Դանտես Վարդանյանը, Դավիթ Խարատյանը, Կիթառի վրա նվագելու գործում խորանալու են Գարի Ամիրխանյանը և Ալեքսանդր Սարոյանը, իսկ դաշնամուրի վրա նվագակցելու է Էդուարդ Զալինյանը: Պարապմունքներն ընթանալու են շաբաթական երեք անգամ: Այսօր, շնորհանդեսից հետո կայացավ առաջին պարապմունքը: